

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍՈՇՄԱՆ

Վերջի քիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրանշցման տողը
20 սանդղակ



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՑԵ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւս
չեմ տրտիք

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մեր այն բաժանորդները՝ որոնք
դեռ չեն հաճած իրենց ներկայ
տարւոյ բաժնեգիրն վճարել, կը
խնդրուի որ փութացնեն. ճարտոյն
տասներորդ ամսոյն մէջ մնաւք.
միևնդեռ շրագրիւն բաժնեգիրն
պետք է կանխիկ վճարել:

ԳՈՐԾԵԼՈՒ ԴԱՍ ՄԸ

Պոսթոնի մէջ հրատարակուող
կոչման շարժաթերթի խմբագ-
րութիւնը իր վերջին 93 թիւով
հրատարակած է Մր. Ճէյմս
Պրայսի հետեւեալ նամակը:

«Ի պատասխանի այն հարցումին թէ
արդեօք այս ժողովուրդին շահերուն
նպաստելու գիտաւորութեամբ՝ յեղա-
փոխական եւ կամ ապստամբական
շարժումներ կրնա՞ն սկսուիլ հիմա: Իմ
պատասխանս բացասական է: Այդ շար-
ժումները պիտի հասցնեն աւելի վնաս
քան թէ օգուտ, եւ հաւանականաբար
պատճառ պիտի ըլլան նորոգ կոտո-
րածներուն եւ աւելի պիտի վատթա-
րացնեն Հայերուն վիճակը»:

Մր. Ճէյմս Պրայս քաղաքական
ժանօթ հեղինակութիւն մը նկատ-
ուած է Սնդիկոյ եւ Սմերիկայի
մէջ իր երկասիրութիւններովը, եւ
իբր երեսփոխան Արեւելեան խընդ-
րոյն մէջ եռանդուն պաշտպան հան-
գիսացած է մեր Դատին, Նաեւ
կողմասը պտտած, Սրարատ լեռը
բարձրացած եւ հայը ու թուրքը
բաւական մօտէն քննած ըլլալով,
իւր քրտնազօգազիւ երկասիրու-
թեան մէջ համակրանք խօսած է
հայ ժողովուրդին նկատմամբ: Եր-
բմն անգլիական խորհրդարանը
գողացնելով, թրջական վայրագու-
թեանց դէմ բողոքող հայ ժողո-
վուրդի այդ պաշտպանը ու ախո-
յանը հարցումի մը պատասխանե-
լով կը զգուշացնէ մեզ հիմա յեղա-
փոխական եւ ապստամբական շար-
ժումներէ:

Մր. Ճէյմս Պրայս իր այս կար-
ծիքին մէջ առանձինն չէ. շատ մը
երեւելի դիւանագետներ հիմական
համար նոյն կարծիքը կը յայտնեն:

Բայց անդին կալիպարտի
Չիպրիեանի եւ իրենց նման գործ-
նական ու թուով յեղափոխական-
ներ, որոնք ազատութեան ձգտող
թշուառ ժողովուրդներու համար
իրենց արիւնը զոհելու պատրաստ
լինելին մէկէ աւելի անգամներ
գործնականապէս ապացուցած են,
յանձնարարեցին հայ ժողովուրդին
սիրտիւ փարիլ յեղափոխութեան
գրօշին, իբր միակ ճամբան ճշն-
շուած ժողովուրդները ազատու-
թեան հանգրուանը առաջնորդող:

Մր. Պրայսի եւ կալիպարտի
կամ իրենց գաղափարակիցներուն
խորհուրդները մեզ նման շուարու-
մի մատնուած ժողովուրդի մը հա-
մար մեծ կշիռ ունենալու են
անշուշտ. որովհետեւ երկուքն ալ
մեզ կարե ից ու բարեկամ անձնա-
ւորութիւններ կամ դասակարգե-
րու ներկայացուցիչներ, բարձր դի-
ւանագիտութեան եւ ներհուն փոր-
ձառութեան ակնոցով զննելով է
որ իրենց կարծիքը կը յայտնեն:
Ուստի կը մնայ մեզ քննել թէ
իսկապէս ի՞նչ ըսել կողմնէ այդ
ականաւոր դեմքերը. արդեօք
զիրար կը հակասեն:

Կալիպարտին կրնէ, յեղափո-
խական դրօշը ձեռքէ մի ձգէք.
բայց չըսել անխորհուրդ ու յա-
խուռն գործեցէք, ժամանակը ու
պարագան նկատողութեան մի առ-
նէք:

Մր. Ճէյմս Պրայս կը յանձնա-
րարէ ՀիՄԱ յեղափոխական եւ ա-
պստամբական շարժումներ չընել,
զի անոնք նոր կոտորածներու ա-
ռիթ պիտի տան կրսէ: Բայց Մր.
Պրայս այս խօսքով ըսած չըլլար,
յեղափոխական կամ ապստամբա-
կան կազմակերպութիւն երբեք մի
ունենաք, այլ կրսէ հիմա մի
շարժիք: Որովհետեւ այդ ներհուն
դիւանագետը պետութեանց աղդի
տրամադրութիւնները անձեռնառու
կը տեսնէ Հայերուն պաշտպանու-
թեան փութալու:

Այդ երկու դասակարգի մեծ
ներկայացուցիչներուն մեզ տուած
խորհուրդները թէեւ առեւտրային
զիրար հակասող կը թուին, բայց
բուն ոգով գրեթէ իրարմէ չեն
տարբերիր: Եւ երբ զանոնք իրար

խառնեք ու զտեք, հետեւեալ
արդիւնքը կունենանք:

Ձեր յեղափոխական ուժերու
գործառնքիներ յարկաւ առիթին
վերապահեցէք. անպատեհ շար-
ժումները նորաւոր կոտորածներու
առիթ կոչուան:

Արդէն մեր մինչեւ ցարդ ունե-
ցած փորձառութիւնն ալ միեւնոյնը
չըսե՛ր մեզ:

ԳՈՐԾԵՐ

ՍՈՒԼԹԱՆԻ ԴԱՏԸ

ՎԷՉԵՐՆԱ ԲՕՇԹԱՆԻ ԴԷՄ

Սօֆիա հրատարակուող Վեչերնա
Բօշթաէ կարտապանք հետեւեալ պաշտ-
պանողական ճառը, զոր դատարանին
առջեւ արտասանեց խմբագրապետ
Տ. Սթօյան Ս. Շանկով, որ այդ առ-
թիւ եօթը օր բանտարկութեան եւ 10
ֆրանք տուգանքի միայն դատապար-
տուեցաւ:

Տեարք դատաւորք,

Առաջին անգամ, երբ հարցա-
քննիչ դատաւորին առջեւ կան.
չուեցայ, տեսայ թէ՛ Երլուզի
մէջ պատահած իրարանցման՝ ու
տեղւոյս «Գաբու-Գէթիլիտապը»-ի,
արտաքին գործոց նախարարու-
թեան տուած ազդու բողոքապի-
րին շարժառիթը իմ մեղադրական
յօդուածս է եղեր, խմբագրական
մեր կազմակերպութիւնը ատոյ
տեսակ մը գոհացում ստացաւ, ո՛-
րովհետեւ այս իրարանցումը խռով-
եալ ու սրտմտած խղճի մը ձայնն
էր. եւ այս էր արդէն մեր ուզածն
ալ. գրգռել զանի:

Բայց երբ՝ յարգելի ընդհանուր
դատախազի կողմանէ ստացանք
ամբաստանիչ յայտագրութիւնը,
հասկցուեցաւ թէ՛ իշխանապետու-
թեան գլխաւոր ընդհ. դատախազ՝
արդարութեան նախարարը, ի փո-
խարէն տեսակ մը «Պուկարական»
հատուցման, քաղաքական դատ մը
կը բանայ մեզի դէմ...

Եւ դատին իբրեւ էական կէտ
կը ներկայացնէ «Դաւաճան Գէնէր»
խորագրով մեր անմեղ յօդուածը,
որ տպուած էր թերթիս 318 թի-
ւին, առաջին երեսին առաջին եւ
երկրորդ սիւնակներուն մէջ, ուր

ի միջի ալոց ըսուած էր թէ՛
«Բոլոր քրիստոնեայ աշխարհի
աչքերուն առջեւ, Պատրիարքը իր
առաջնորդներովը մէկտեղ արիւն-
արբու սուլթանին ձեռքերէն նշան-
ներ կընդունի իր լրտեսութեանը
փոխարէն»:

«Իսկ ժընէվի մէջ ուսանող այ-
լասեւեալ եւ մինչեւ օսկրներուն
ժուժը ապականած յոյն երիտա-
սարդութիւնը՝ Սուլթանէն ռոճիկ-
ներ ու նպաստներ կը ստանայ
ի փոխարէն լրտեսութեան՝ ու ի-
րենց անարգ գոյութիւններուն
պահպանման համար, ամենամեծ
չարագործին գահին առջեւ—Սուլ-
թան համար Բարդ, խալիֆանե-
րու գահին յափշտակիչ, իր երկ-
րին ժողովուրդը սպաննող, մեծ
եղբօրը ու ընտանիքին գահիճը»:

Սօֆիայի նահանգային դատա-
րանի, պատուարժան ընդհ. դա-
տախազութեան պաշտօնէութիւնը,
տեսնալով մեր այս յօդուածը,
գլխաւոր ընդհ. դատախազի հրա-
մանագիրը ստանալէն վերջը, հա-
մոզում կը գոյացնէ թէ՛ յիշեալ
յօդուածը քաղաքի գլխի մը պա-
տիւր ու արժանիքը ստորնացնող
խօսքեր եւ իմաստներ կը պարու-
նակէ, ուստի՝ բարեբաղդաբար ը-
սեմ, զիս դատի կենթարկէ, ա-
սանկ ամենալուսաւորեալ եւ իր ան-
կողմնակալութեամբ ժանօթ՝ դա-
տարանի մը առջեւ:

Նոյն այդ որոշման հետեւանօք,
առջեւիդ կը գտնուիմ, սպասելով
ձեր վճռոյն:

Բայց, թո՛ղ պիտցած ըլլայ
Պատ. դատարանը թէ՛ ես ինծի
արդարացնելու համար չէ որ ոտքի
կենեմ, այլ ամբաստանելու հա-
մար. որովհետեւ ինքզինք արդա-
րացնել ջանալը, յանցաւորութեան
ստուեր մը գէթ կը պարունակէ իր
մէջը:

Յանցապարտ մը չեմ, ու չեմ
պաղատիր ձեռնէ ոչ գթութիւն եւ
ոչ ալ ներողամտութիւն. այլ—ար-
դարութիւն:

Տեարք դատաւորք,
Անցեալ Մարտ ամսոյն մէջ Պու-
սոյ հեռագրական գործակալու-
թիւնը մեզի լուր կը բերէր, ամօ-
թալի, անբարոյական եւ ոչ քրիս-

տոնավայել դաշնակցութեան մը.— դաշնակցութիւն մը քնդմէջ խաչի և Մահիկի: Պոլսոյ ֆէնէրի Պատրիարքը Երևորդի մէջ պաշտօնի կանչուած է, ու այս լրտեսութեան պաշտօնին հրաւիրած է նաեւ բոլոր յոյն վարդապետները. իսկ ուսանող յոյն երիտասարդութիւնը տաճկական գաղտնի ոստիկաններ կարգած է, Զուլեյքերի մէջ գրտնուած Մակեթունա-Օտրինցինբուրուն, Հայերուն և Երիտասարդ Թուրքիբուն ընթացքը յրտեսելու: Յիշեալ հեռագրին մէջ եկեղեցւոյ պաշտօնեաներու առատօրէն շնորհաբաշխուած նշանները կը համարէին, ինչպէս նաեւ յիշեցի մէջ յոյն երիտասարդներուն նուիրուած ռոճիկները, որոնք՝ այլեւս Երևորդի անձնական սիրելի որդեգիրները կը դառնային:

Երբոր այս եղելութիւնները Արեւմուտքին մէջ իմացուեցան, տեղական թերթերը զգաւորութեան փոթորիկներ կը յարուցանէին: Բնական էր թէ — եւս ալ՝ իբրեւ երկրին զաւակը, որուն հաշտոյն յոյն ֆէնէրի սերունդները, իրենց անամօթ և արգահատելի ծառայութեանց փոխարէն նշաններ կընդունէին — եւս ալ՝ իբրեւ երկրին զաւակը, ուսկից արմատախիլ և դաժ էին այն արծաթապաշտները, որոնցմով Երևորդը ծախու առած էր Ելլաթայի ապականած յաջորդները, Ովսանապէտը չէր արդարի, այլ՝ զգաւորութեան փոթորիկից արտայայտութիւններ, անէծքներ ու ամբաստանութիւններ:

Հասարակաց դատարանին առջեւ ամբաստանած եւ ֆէնէրի և յոյն մանուկները:

Ես տուած եմ այդ կտակածոտ Սուլթանին արժանապայելա-

ծականները — արիւնարբու, որուն համար Տ. Բէյը Բիւրս Օրորթերթին 849 թուոյն մէջ քսուած է:

«Ես ոչ թէ անոր ոճրագործութիւններուն տեսակները կը համարեմ, ոչ ալ զրպարտութիւններ կընեմ, այլ իրեն տիտղոսները կը թուեմ»:

Նոյնպէս եւս զգրած եմ «Մեծ Մարգարային» ու այս անունը ստացած է Մեծն կրտսերութեւ, որ նոյն իսկ Անգլիոյ խորհրդարանին մէջ որակից զինքը: Հայկական ջարդերէն վերջը իրեն տրուած տիտղոսներէն — որպիսիք էին «Արամ Բ. զահիճ, Արամիր Գազան» և ոչ մէկը գործածեցի, որպէս զի ձեռքերս լուսմ Սուլթանին բոլոր հալածութիւններէն զինքը ամէն ոք ճանչցած է, բռնակալ, միահեծան ու յափշտակիչ, բայց և այնպէս ամէն ոք ալ կը վախնայ անկէց: Մեծն չափերն ալ իբրեւ գաղտնի ոստիկաններ կը ծառայեն անոր, որպէս զի ֆրանսական առածը յիշեցնեն — ման գնման սիրէ: — Զեմ քսեր որ Սուլթանին այս գաղտնի ոստիկաններուն մէջ նախարարներ ալ կան: ազգը զիրենք կը ճանչնայ: դատարանը որուն առջեւ եմ, ու կը դատուիմ, գիտէ անոնց անուանները և իրենց գործերուն համար հաշիւ կը բռնէ:

Յարգելի ընդհ. դատախազը, զիս կամբաստանէ թէ՛ պարզ անհատները անգամ ստորնացնող խօսքեր և ոճիր գործածած եմ Մեծ Մարգարային հասցէին, ո՛ր կը մնայ թագակիր գլխոյ մը համար:

Կը բարեհաճիք անշուշտ ներել ինձի, եթէ ըսեմ թէ՛ չեմ տեսնար Սուլթանը ո՛ր և է թագ կրող մը,

այլ ջալմա. չեմ գիտեր որ անի օժուած մէկը ըլլայ, և ոչ ալ օրինական ձեւերու ներքեւ ստացած իր գահը: «Թագակիր գլուխ» բառը, ամեն տիրապետող բռնակալներուն համար իրաւագիտական սահմանին մէջ չէ, այլ այն տիրապետող թագաւորներուն, որոնք՝ Աստուածային օժուածներ են:

Ոչ մէկ օրէնք, Պեհմէշին, թագաւոր, Մատ-Մուլլահ Ասիայի, Ալիբիկէի ու Մատակասկարի իշխանապետները թագակիր գլուխ ընդունած է, ոչ ալ՝ Ֆրանսայի ընդհ. դատախազը, դատի կին թարկէ լրագրիները երբ կը սկսին Պեհմէշին արիւնալի արարկները թուել:

Պոլսոյ Պեհմէշինը՝ հազար անգամ աւելի մեծ մարգարային և մանաւե՛ ռոճագործ մըն է Ալիբիկէին, ու երբ իրեն տիտղոսներ կուտամ, թշնամաճքներ, անարգանքներ ու զրպարտութիւններ չեն բրածներս, այլ կը ցուցնեմ պարզ սահմաններ, նորէն արքայական որպիսութեան նկարագրուած թիւը արտայայտող:

Թող գիտցած ըլլայ ամբաստանիչ ատենը թէ՛ փոխանակ Սուլթանին, ամբաստանելու կարգը մերն է: Զինք ուզեր ներել Սուլթանին՝ մոռացութեան ու լռութեան տնիշաչարութեամբ:

Արիւնոտ ճշմարտութիւնը բոլոր Պուլկարիոյ մէջ պիտի տարածուի, նեմ, ինչպէս նաեւ ամբողջ աշխարհին՝ Դիլիքի-ժողովն մինչեւ Սելանիկ և Պոդոլ քաղէ, ամեն տեղ ուր մեր լրագիրը կատանան ու կը կարդան: որպէս զի լսելի ըլլայ աշխարհին ու քննադատի քաղաքակրթութեամբ մարդկութեան այս ոճրագործ, կան անտարբերութիւնը՝ ազատ պուլկարիոյ ամօթալի չեղո:

ընթերցող ու պուլկարական դապինէրի ոչ գողելի համախոհութիւնը (նախագահը գլխաւոր իշխաններ կընէ):

Ինչո՞ւ Մեծ Մարգարային խիղճը կը տանջուի: Ինչո՞ւ գլխաւոր ընդհ. դատախազը կը հրամայեմ նազրէ: Ինչո՞ւ վերջապէ՛ս զիս կը դատապարտէք, արգիճօք անո՞ր համար՝ որ լիութանը յափշտակիչ անուանած եմ:

Բաց միթէ յոմաններու ժառանգորդը՝ ու իսկական խալիֆը մինչեւ ցայսօր խաւար անկիւններու մէջ չպուկի՞ր: Բռնութեամբ իր եղբայրը զահագուրկ չէ՛ բրած, անբարոյականութեամբ, բռնակալութեան ու լրտեսութեան հարիւմական ներկայացուցիչ Համիտ Պէյը, բռնի ուժով վար չառա՞ւ միթէ իր ժողովրդեան ճշմարիտ հայր եղողը, որպէս զի անոր տեղը զբաւելով, պատերազմ մը հրատարակէ, ու 400,000 մարդկային արարածներուն կեանքը ոչնչեցնէ: Սուլթան Համիտը խալիֆէ միթէ, երբ Մէքքէի ու Մէտինէի Եէմէնի ու ամբողջ Արաբիոյ մէջ Միւսուլման ազգը, զինքը այդպէս չընդունիր: Խալիֆէ միթէ նա երբ բանտին մէջ օրինաւոր ժառանգորդը ուժ լծալի բրած է:

Կամ թէ ձեր խիղճը ձեզ կը տանջէ, զանի իր ժողովրդիկ սպաննելը կոչուու համար:

Շատ լաւ, յարգելի Տիարք դատաւորք: Բայց Սուլթանը պաշտօնապէս ատանկ ճանչուած է մեծ տէրութեան Պոլսոյ դէսպաններէն: Հայկական ջարդերէն վերջը Ֆրանսական կառավարութեան յօրինուած «Դիլիքի գրքին» 271 երեսին մէջ թիւ 252 գրութիւնը կը տեսնանք:

Ու կը շարունակէ,

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(19)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՐԻՒՆԱԼԻ ԹՈՒԱՎԱՆԸ...

Տէր Սիմոն իր հոգին դառնացուցած էր... իր հոգին՝ որ հայրենեաց քաղցրութիւնը զգացած էր լեռներու մէջ:

Ուստի առանց բառ մը արտասանելու, ձեռքը տոգոյն ու հրատապ ճակտին տանելով սկսաւ մտածել:

Պատաւ կ'իներ տեսնելով որ իր եղբոր զաւակը խօսիլ չէր ուզեր, խնդրեց որ քննախուր երթայ:

Ներսէս Արծրունին ոտքի ելաւ ու նշարարնը քաշուեցաւ:

ՄՈՒՐԱՑՈՒՄԸ...

Վերջապէս ատեն էր: Երկինքը սեւ ամպերով կը ծածկուէր: Աստիճանին ցնցոտիներ հագած մարդ մը Վանայ բանտին դուռը կանգ առաւ: Խորին ու ապուշ նայուածքով մը գիտելէ ետքը չորսդէն՝ դուռը կ'ընդգծուէր մը մօտեցաւ ու թուրքերէն լեզուով մը հարցուց.

— Ներսէս է քանտապա՞նը:
— Այո՛, ներսէս է, պատասխանեց զոնապան-զինուորը:

— Կրնամ տեսնել:
— Կրնաս...
— Ուրեմն թողուցէ՛ք որ քովը երթամ:
— Գնա՛, հրամայեց զինուորը:

Ցնցոտիներ հագած մարդը, որ Միւրա Խալապարն էր, զգուշութեամբ մը գէպի բանտին սրահը յատարացաւ: Այն տեղ իր դէմն ելաւ քանտապա՞նը:

— Ի՞նչ կուզես, հարցուց քանտապա՞նը՝ դարձաւ:

— Ձեր մեծութեանը հետ կը փափաքէի խօսիլ, միմիջեց Միւրա Խալապար, որ աղէկ ուսումնասիրած էր թուրքերու սիրած դրաւող բացատրութիւնները:

— Դո՛ւն, վրայ բերաւ քանտապա՞նը:
— Այո՛, ծառանիդ:

— Եկո՛ւր նայիմ՝ ի՞նչ ըսել կուզես, ընդհատեց քանտապա՞նը ու առաջնորդեց զինքը շվաքին վրայ բացուած փոքրիկ սենեակ մը, ուր կը բնակէր ին-

Միւրա Խալապար սենեակը մտաւ ու փայտէ աթոռի մը վրայ նստեցաւ:

— Պատմէ՛... ի՞նչ կուզես, թոթովեց քանտապա՞նը:

— Ես մտաքցական մըն եմ, բարի բանտապա՞ն, նկատել տուաւ Միւրա Խալապար: Բայց ձեռքիս մէջ բարիք մը ունիմ՝ զոր կուզեմ ձեր մեծութեան նուիրել... Ասոր փոխարէն՝ փոքրիկ ծառայութիւն մը՝ պիտի խնդրեմ:

Քանտապա՞նը խոշոր լացաւ իր աչքերը ու տարօրինակ նայուածք մը նետեց մտաքցականի մը հագուստով ծերունիին վրայ: Կարծես թէ չհասկցաւ անոր առաջարկութիւնը, չհասկցաւ անոր նուէր բառին նշանակութիւնը... չհասկցաւ, այո՛, որ լուրջօրէն ներթափանցող մէկ ծածկուած ողորմելի մարդէ մը: Այդ պատճառաւ ժպտով մը հարցուց.

— Ի՞նչ ծառայութիւն կը խնդրես ինչե՛... իմ ձեռքիս ի՞նչ կուզայ:

— Դուք ամեն բան կարող էք ընելու, վրայ բերաւ Միւրա Խալապար:

— Ի՞նչ բան:

— Օրինակի համար կարող էք գաղտնապէս դործ մը վերջացնելու եւ փոխարէնը կ'ուրիկ գումար մը ստանալու:

(Շարունակելի)

№ 252

Մեծ պետականացման և արտադրության զարգացման համար անհրաժեշտ է զարգացնել արտադրությունը:

2 Սեպտեմբեր 1896

Իրենց 15/27 Օգոստոսի հաշվառման ծանուցագիրը մեջ բերելով, մեծ Պետականացման և արտադրության զարգացման համար անհրաժեշտ է զարգացնել արտադրությունը:

Հետևեալ պարագաները գալիս կապացուցանեն:

1. Խմբակները միասնադրյալ քաղաքի զանազան վայրերում վրայ խոյանալով, Դրամատան հայ յեղևիտականներու կողմէ գրաւուելուն առաջին լուրին վրայ, երբ ոստիկանութիւնն ու զինեալ պաշտօնէութիւնն իսկ չփոխուելուանց վայրը չէին փութացեր արդ, Բ. Դուռը կընդունէր թէ խռովարարներու ոճրագործ ծրագիրներուն վրայ ոստիկանութեան նախապէս զեկուցումներ հասնել էին:

2. Այդ մարդերու մօտ մասը նոյն հազուադէպ եւ նոյն զէնքերը կը կրէին:

3. Անոնց կընկերակցէին ու կառավարողէին սօփառներ, զինուորներ, նոյնիսկ ոստիկան սպաներ, որոնք ոչ միայն անոնց ծայրայեղութեանց անզգայ կը մնային, այլ մերթ կը մասնակցէին ալ:

4. Հանրային ապահովութեան պաշտօնականներէ ոմանք, տեսուեցաւ որ, այդ պաշտօնակներու բերք ու գանձակներ կը բաշխէին ու անոնց կը ցուցնէին թէ զոհեր գտնելու համար որ ուղղութեան հետեւելու են:

5. Ազատութեան կրգան շրջիլ ու անպատիժ իրենց ոճիրները գործել, զօրագուններու ու սպաներու աչքին տակը, նոյնիսկ կայսերական պալատին շրջակայքը:

6. Ոճրագործներէ մին, Դեպքանատան մը մէկ թարգմանին կողմէ ձեռք անցուելով, յայտարարեց թէ զինուորները զինքը կալանելու կարող չէին: Երկու զինուորականներու համար որ ուղղութեան հետեւելու են:

Նոյն պաշտօնական գրութեան 275 երեսին մէջ՝ Պոլսոյ ֆրանսական զեխանատան գործակատար Տ. Տըլա Պուլիսիի արտաքին գործոց նախարար Տ. Հանօթոյի շըրքած տեղագրին մէջ, ըսուած է:

«Ձեր վսեմութեան չեմ կրնար թուել կարգ մը անվերջանալի ապացոյցներ, որոնք յայտ յանդիման կը ցուցնեն թէ՛ նոյնիսկ Սուլթանն է որ զէնք կուտայ այս մարդասպաններուն ձեռքը ու կը զրկէ շնչի, սպաննել ամէնը որ Հայ է, ինչ որ հայկական է եւս եւ այլն»:

Եթէ վեց պետութեանց զեխաններուն ներքի է, իրենց պաշ-

տօնական գրութիւններուն մէջ, Սուլթանը՝ իր ժողովուրդը սպաննող կոչել, ի չօւ ինձի, մեզի և կօմ ձեզի արդիւնաւոր բլլայ:

(Շարունակելի)

ՕՐՈՒԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Վերջին ժամանակներու մէջ, Խալիֆ քաղաքական տնօրէններ, արդի պահանջմանց տեսակետով իրենց երկրին շահերուն լաւագոյն մէկ դիտակցութեամբ, թագաւորութիւնը օժտեցին կարգ մը արդիւնաւոր բարեկարգութեանց շարքով, որոնք միանգամայն կընդգրկեն արտաքին թէ ներքին քաղաքականութիւնը:

Բարեփոխութիւնը նախ ներքին պէտքերու բարեփոխութեամբ սկսեցաւ: Յայտնի է որ Խալիֆի ժողովուրդը, հակառակ իր զեղարուեստագէտի համար զոր դարերը մեզի կտակած են, Եւրոպայի ամենէն յետադէմ, ամենէն թշուառ ժողովուրդներէն մէկը կը մնայ: Եւրոպայի թշուառութիւնը, չքաւոր գոյութիւնը՝ գուցէ հասարակ չունենար այս պատճառաւ: Եւս ամէն տարի Ամերիկա գաղթող հազարաւոր օտարականներու մեծամասնութիւնը միշտ Խալիֆային կը կազմեն: Հետեւապէս, Խալիֆայի նորակալով ազատական նախարարութիւնը—Եւրոպայի ամեն ազատականը գուցէ—Մանարուէլի ինտուստրիալ վարչակազմութեամբ, բայց իսկապէս ներքին գործերու նախարար Ժիօլիզիի առաջնորդութեամբ, իր բարեշրջող ծրագրին գործադրութեան մէջ, ամէն բանէ առաջ հետաժուտ եղաւ: Գարման կամ գոնէ մեղմացում տանելու յետին թըշուառութեանը, երկրին Հարաւարկող մանաւանդ, աշխատաւոր ու անգործ զանապաղներ: Բայց որովհետեւ ամէն բարեշրջում, ամէն բարեփոխում, որպէս զի կարելի ու տեսական ըլլայ, տիրականօրէն անհրաժեշտ է որ զանոնք իրագործելու կողմէ զահիճը խորհրդարանին մէջ ստուար մեծամասնութեան մը հովանիին ներքեւ գործէ, ներքին նախարար Ժիօլիզի, վերջին տարիներու մէջ Ֆրանսայի կառավարող քաղաքականներու հետեւելով, նախընտրեց յետագիտութեանց ու կրօնական նախապաշարմանց կողմնակից հատուածներու դէմ, ծայրայեղ բարեկարգութեանց կուսակից գաղափարներ, Խալիֆայի ընկերակցութեան կողմէ ընել, որոնք Խալիֆայի խորհրդարանին մէջ ալ Մայրագոյն Զախակողմը կը ներկայացնեն: Եւ անգամ մը երբ զահիճին գոյութիւնը ու ապագան—որ նախ անտոյգ էր—ապահովեց, ալ բարեկարգութեանց մէջ կէս ճամբան մնալու չի զանդաղեցաւ: Երկրին Սահմանադրական ոգին մէկ լայնագոյն մեկնութեամբ, նախ կարծիքներու արտայայտութեան ազատութիւնը նուիրագործեց—որ որ եւ զազաւ երկրի սիւնա ֆու ճոն պայմանն է—արտօնելով նոյնիսկ կառավարութիւնը գաղափարաւոր յետագիտական թէ յառաջիմասէր ծայրայեղ հատուածները որ ուզածնուն պէս ցոյցերու, գումարտի միերու, լրագրիներու, նոյնիսկ օրէնքին թոյլադրած չափով՝ գործադրելու մէջ իրենց համոզումները դաւանին: Յետոյ, նորատի վեհապետին քաջալուրութեամբ՝ ծրագրեց ապահարգանքի մասին օրէնք մը, որ կրօնամոլ ուժ գին ընդգրկուած էր մը բաղնեցաւ, ու ներտեցաւ նախարարութիւնն իսկ ապաւել:

Իսկ երկրին արտաքին յարաբերութեանց մէջ ներմուծուած փոփոխութիւնը՝ այս բարեշրջութեան հանդիսաւոր պատկուծի եղաւ, ապահովապէս միջին վերջին տարիներու մէջ, միշտ մէկ շարաշուք հետք մնացեր էր Ֆրանսայի դէմ այն նախապաշարման տեսլութենէն, որուն տնտեսաւոր վարչակազմը Գրիպի եղբէր էր: Բարեփոխութեան Խալիֆայի արտաքին գործերու վերջին երկու նախարարները, Վիսթոնգի Վէնոսթա մարքիզը ու Մ. Բոնիէզզի հեղինակութիւնը ունեցան թագաւորութեան շահերը աւելի պաղարկելու թեմաք նկատողութեան առնելու: Երեւակ զինակցութեան մէջ Խալիֆայի իր դիրքը պահել տալով հանդերձ, արտաքին գործերու արդի նախարարը՝ Մ. Բոնիէզզի յաջողեցաւ Ֆրանսայի հետ առեւտրական համաձայնութիւն մը գոյացնելու, որ նախկին օգտակարութեան զատ, ոչ միայն իբր անմիջական արդիւնք ունեցաւ Միջերկրականի վրայ ու Աֆրիկայի եղբայրները, Ֆրանսայի ու Խալիֆայի միջեւ, վերջնային ի նպաստ ազդեցութեան շրջանակներու կարգադրութիւնը զիւրացնելու, այլ մանաւանդ վերջ մը տուաւ երկու լատինացի ժողովուրդներու միջեւ տիրող թշնամանքի մը, նոյնքան անիմաստ որքան աղետալի: Եւ այս արդիւնքը Խալիֆայի համար մանաւանդ կարեւոր յաջողութիւն մը եղաւ: Անշուշտ, Խալիֆայի երկու գաղափարներուն հետ Յունիս ամսոյ մէջ երբեակ զինակցութիւնը վերանորոգեց, մինչեւ 1915, թէեւ այդպիսի զինակցութեան մը մէջ Խալիֆայի մուտքը ալ չի ներկայացներ այն հատու անհրաժեշտութիւնը, զոր ժամանակ մը գուցէ կը պահանջուէր: Բայց միւս կողմէ Խալիֆայի նոր շահերուն գոյութեանը նախաձեռնողի, Մ. Բոնիէզզի չի թերացաւ երբեակ զինակցութեան մէջ Ֆրանսայի վերաբերութեամբ Խալիֆայի նոր դիրքը ճշդելու: Մ. Տէլքասէ, երբեակ զինակցութեան նորոգուելուն առթիւ Ֆրանսայի երեսփոխանական ժողովոյ բնմէն հանդիսաւորապէս յայտարարեց արդէն թէ, Խալիֆայի Ֆրանսայի ապահովութիւնը տուած է որ, զինակցական կապերու հետեւանքով, իր արտաքին քաղաքականութիւնը ոչ ուղղակի, ոչ անուղղակի կերպով Ֆրանսայի դէմ ուղղուած է: Եւ քաղաքականութիւնը որ եւս առեւ, որ եւ կերպով Ֆրանսայի համար սպառնալիքի կամ թշնամանքի հանգամանք մը պիտի չի ներկայացնէ, ոչ «դիւանադատական» տեսակետով, ոչ ալ «զինուորական» միջազգային կարգադրութեան» զօրութեամբ: Վերջին կէտը կարեւոր է: Եւս առթիւ եւրոպական մամուլին մէջ ծագած վիճաբանութիւնները տակաւին վերջ չի գտնել զատ, խնդրոյն որ եւ է նոր լուսաբանութիւն մ'ալ չեն մատակարարած: Բայց բան մը կը մնայ, ուշադրութիւնները գրաւելու արժանի: Խալիֆայի թէեւ երբեակ զինակցութիւնը վերանորոգեց, բայց Վիկտորիան մնաւ: Գ. Բեզրայուրկ այցելելով Վիէննա այցելելու զանց ըրաւ, ու Պետլին այցելութեանը միջոցին՝ մերժեց նոյն զինակցութեան վրայ իր բաժակաճառին մէջ գերման ֆայզլին յաղիարդի յոխորտանքը ու խանդավառութիւնը փոխ առնելու:

Տ. Է.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Արարկիրի առաջնորդը, Տ. Մուշեղ վարդապետ, խնդրոյ մը համար Ակն գաղաժ ըլլալով, անդունդաւ անափիս ըլլալով պատրաստուող 20-30 տնտերները, որոնք այս առթիւ խորհրդի հայ Հոռմէականներու առաջնորդին գիմեր էին, իրենց մտադրութեամբն ետ կեցնելու լաջողեր է:

— Կիլիկիոյ կաթող. Տեղապահ Տ. Կիրակոս եպիսկոպոս, ծանր կերպով հիւանդացի է, մինչ Ընտրողական Ժողովոյ մասնակցելու համար Ատանա երթալու կը պատրաստուէր:

— Ռանկունի բարեսէր ազգայինները, իզմիրի Ս. Լուսաւորչեան Հիւանդանոցի հարկւրման Զորեւանին առթիւ, 41 անգիրական ոսկի նուիրած են: Նոյնպէս Տիկին Երանուհի Բարթող պէյ, գոյովագրութիւն կին մը որ Պոլսոյ մէջ տեղ չի գտնու, ուր նուիրատուութիւն մը չընէր, նոյն Հիւանդանոցին 113 ֆուսք նուիրել է:

— Ծապին Գարահիսարի առաջնորդը Սեփաթ վ. թերթերէ ծանօթանալով որ Աֆրիկեան Տրիպոլիոյ Հայերը երկար ատենէ ի վեր իրենց կրօնական պէտքերը հոգացող հոգեւոր պաշտօնեայէ մը զուրկ կը մնան, առաջարկել է Պատրիարքին իր վիճակին գիւղերէն Անգրի գիւղի Սուփոնիա քահանայ Տրիպոլիոյ ուղարկել, տեղացի հայերը հոգեւորապէս մխիթարելու և զանոնք մայրենի Եկեղեցին ծոցը պահելու համար: Սուփոնիա քահանայ գրաւորապէս Առաջնորդին հրաւերը ընդունել է:

— Հայագրի ծանօթ բժիշկ, Տօքթ. Խորասանճեան, որ Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան անդամ էր, իր հրաժարականը մատուցել է, առարկելով թէ իր առաջարկած բարեփոխութիւններէն ոչ մէկը Հիւանդանոցին մէջ գործադրուած է, ուր իր մատնանշած թերութիւնները ցարգ կը մնան ու կը շարունակուին:

— Խոստգիւղի Գալֆուսեան որբանոցին չքաւոր վիճակին դարման տանելու համար, ինչպէս մեր նախորդ թիւերուն մէջ գրած էինք, Պատրիարքը կարգ մը աշակաւոր հայ անձնաւորութեանց շրջաբերական—կոչ մը ուղղել էր, որբանոցին վիճակը անոնց բարեփոխութեանը ենթարկելով: Պոլսոյ կառուար վաճառականներէն ոմանք, այդ շրջաբերականէն ազդուած սկսած են արդէն Պատրիարքին նուէրներ ուղարկել:

— Նպաստներու նորակալ Յանձնաժողովը, որ այժմ Պոլսոյ առաջնակարգ հայ վաճառականներէն կը բաղկանայ, Պատրիարքին նախագահութեամբ իր գումարած վերջին նստին մէջ հետեւեալ որոշումները տուած է. նախորդ նիստերու մէջ որոշուած էր քանի մը

գաւառներու մէջ, ինչպէս Երզնկա, Շապին Գարահիսար և ուրիշ տեղեր թիւններ տնկելով, շերամաբուծութիւնը առաջ տանիլ: Յանձնաժողովը նկատելով որ թիւնի ներ տնկելու յարմար եղանակն է հիմա ու Հանրային Պարտքերու վարչութիւնն ալ տրամադիր է ձրիաբար թիւնի հոստերու բարունակներ հալածելով Պրոսպի և իգմիսի վիճակներէն, որոշուեցաւ այս մասին դիմում ընել Հանրային Պարտքերու վարչութեան, նկատելով որ բաւականաչափ հոստ տալու պատրաստ է: — Վանայ կարմուրթի վանքի որդանոցին տեւադուլեան պայմանաժամը լրացած ըլլալով, նպատակ դադարած էր, և նոյն վանքի Հոգաբարձութեան ալ գրուած էր, որպէս զի տեղական միջոցներով հոգայ և միայն անչափան սորբերը պահէ, Հոգաբարձութիւնը պատասխանած է թէ, արդէն չափահասները ճամբուած և միայն 10 անչափահաս որբեր կը պահուին: Նախ կը խնդրէր որ ժամանակ մըն ալ շարունակէր որդանոցին համար սահմանուած կէս նպատակ ու ասոր փոխարէն Հոգաբարձութիւնը կը խոստանար պահուած որբերու թիւը 10 է 23 ի բարձրացնել: Յանձնաժողովը Հոգաբարձութեան գրել որոշեց որ նպատակ սնտուկը թողակ զրկելու վիճակին մէջ չըլլարով, տեղական միջոցներով բաւականանալու է:

ՀԱՎԱՏՈՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Պուլկարիա սինօրքնտան թիւրքիայ չէթէրէ կէշմէքտէ օլտըտըղընտան տօլայը Պապը Ալի պուլկար հիւքիւմէթինէ շէտիտ իշթիքեալար իթտի:

— Աօքէրիյէ մէճիսինտէ պատել միւլէքէրէ վէրիլէն սօն գարար միւլէքիւմէթինէ Պուլկարիանրն սինօր պօյը բէք տըգգաթլէ մուհաֆազա օլընաճազ տըր:

— Սթանպօլ սըրպ էլիսի Մ. կրուիշ Պապը Ալիյէ միւլաճաթլէ, Արնափուտարըն էսկի-Սերպիատա իրիսթիանլարա գարշը զատտարընգտա պուլընալարընտան իշթիքեա իթմիշ տիր:

— Սթանպօլ էլիլէրին էքսէրիսի պիր թէճէմիտէ Սթանպօլ պօղաղարընա տայիր օյան ահտնա մէնին՝ սօն վուգուաթլար սէպէպի իլէ՝ եհնիտէն թէտգըգ ու թէպ տիլ իտիլմիսինն իգթիզաւընը զայրը բէսմի սուրէթտէ մէվզուի պահս իթմիշ օլտըղարը Սթանպօլտան թաւա պիւտիլիլիշ տիր:

— Ախիւրէն Սըրպլար վէ Արնափուտար պէյնիտէ վուգու պուլան միւսատէմէր սէպէպի իլէ Սթանպօլտան թըրէնի մախսուսէ հիճէ վազթը ալթը զապիթ Սեր:

պիա հուտուտընա կէօնտէրիլիկի մահէլինտէն Հոկտեմբեր 10 թա. շիլիսէ պիւտիլիլիշ տիր:

— Սօֆիատան թաւա պիւտիլիլիկի կէնէն, Տօպրիլտէ մէնիֆի օլընուպտէ, օլտտան զայպ օլտն դալմազա Նիքօլ Մաքէ թոնիայա կէշմիշ օլտարա, Սէլա-նիք վիլայէթինտէն Րօտօր տաղընա գատար, բէզա Սքիւպտէ, Սթիւմիլիցատա, Տէմիր-Հիսար վէ Նէվրօքօր գաղալարընտա ըսեան իլան իթմիշ:

Պազաթ մուխպիր պու հօվա տիսի թաստիգէ միւլթաճ կէօրի. յօր. զիրա տէյօր. «Մաքէթիսիա տախիլինտէ Սարաֆիզըն միւլէթ. մէլ կիլի թէշքիլաթի վար իքէն պու ըսեանա հէմէֆէտար տէկիլ տիր. հալպուքի Միլիսիլիլիշ տիր թարաֆտարլարը պու ըսեանըն թէշքիլիսի իսէլէրտէ՝ Մաքէթի. թոնիատա թէշքիլաթլարը պու. լընմատըղ սէպէպի իլիլիլալ ճէ. սամէթ քէսպ իտէմէլէճէք տիր»:

— Սէլանիքտէն Հոկտեմբեր 2 թարիլի պիր մէթմուպտան. «Վօտընա ճրվարընտա Մաթէգի քէօյիլինտէ Պուլկարլար հիւքիւմէթ թահսիտարընր ալէնէն գաթլ իթ տիլէր վէ սօնրա 4,000 պուլկար սիւհալանուպ տաղարա չէքիլտի. լէր: Հիւքիւմէթ 2,000 ասքէր կէօնտէրտի ալէրին արգասընտան. գաթլա պաշտար վէ տէհէթլի պիր մուհարէպէ հալի քէսպ իթտի վէ էլան տէվաթ իթմէրտէ տիր. թօր վէ թիւֆէնկ սէսլէրի իշիտի լիյօր, զալէպէ հանկը թարաֆա գալտըղը պիլինմէյօր»:

ՏԱԽԻԼԻԹԷ

Պուլկարիատան Մաքէթիսիալը-լարըն չէթէրէր թէշքիլի իլէ սի-նօրտան կէշմէթիլին մէնն իթմէք վէ ասլա մէյտան վերմէմէք իշիւն, Պուլկար հիւքիւմէթի իւշ ընթի բէտիֆլէրին պիր զըսմըն սինօրա կէօնտէրմէք իշիւն գարար վէրմիշ տիր: Քէօստէնտիլ գաղաւթտա սինօր պօյընտա 1,500 ասքէրլէ գօրտօն գուվէթլէշտիրիլիշ տիր:

— Գօնթ իգնատիէվ Սօֆիատան Սեպտեմբեր 9 տա մուֆարա. գաթլէ Րուսուգ թարիգի իլէ Րուսիայա կիթմիշ տիր:

— Էվլէթի նուսիլմիլտէ եազմը օլտըղըմըզ իւզըն, բազար կիւնիւ շէհրիմիլ պէլէ ռիլէ մէյ. տալընտա Մաքէթիսիա իշիւն մի թիլիկ Թէճէմիւ օլընտը: Հիւքիւ. մէթ թարաֆտարընտան մատա տիկէր բարթիլէրին բէյիլէրի նուլգար իրատ իտուպ, Մաքէ. թոնիատա թիւրք մէմուլարըն, իսլաթ Արնափուտարըն վէ պաշը. պօղաղարըն Պուլկար էհալիլէ գարշը թէգիլգաթ վէ զատտար-լըղարըն թատատ իթտիլէր: Մի. թիլիկտէ պուլընան պիլիլէրմէ է հալի աթիտէքի գարարլարը գա. պուլ իթտի:

1. Մաքէթիսիատա վէ էտիրնէ վիլայէթինտէ մուգտարըպ օլտն-լարա թէէսիֆ վէ ճէստրէթլէ բէն-տիլէրին միւտաֆտա իտէնլէրէ թէշէքիւր պէյան իթմէք:

2. Պէրլին ահտամէսինն 23 ինճի մատտէնին իճրաւը իշիւն պուլկար հիւքիւմէթիլին զայրէթիլին աա. վէթ իթմէք:

3. Հիւլիտէն մատտի վէ մանէվի իանէ վէ մուսվէնէթ իսթմէք:

4. Մաքէթիսիատա իճրա օլը. նան շու սօն վահշիլիլէրէ զայրը Պուլկարիա էհալիլինն թահաթ. իւլ իտէմէլէճէկինն պուլկար հիւքիւմէթէն պէյան ու իսթար իթմէք:

5. Մաքէթիսիատա մուգտարըպ օլտնլարա իանէթլէն վարնա էհալիսինտէն բարա թօրլամազ իշիւն պիր գաշ մարուֆ զաթլարը վաղի. ֆէտար էլլէմէք:

6. Միլիլիկին շու գարարլարընր Պուլկարիանրն վիւքէլա մէճիսինն վէ մաթպուլաթա թաղտի մ թէթ հիւմ իթմէք:

— Շէհրիմիլ իլիք ֆապրիգա. սընըն իշճիլէրտէն էքսէրիսի աղար էրթէսի կիւնիւնտէն պէրու թա. թիլի մէլլուլիլէթ իթմիլլէր տիր: իշպու թաթիլին պաշլ ճա սէպէպի, տիրէթթօրըն ճահլ իշճիլէրի իս. թէտիկի կիպի գուլլանազ մազ. սէտի իլէ՝ ալէրտէ ագիլ վէ տիլի աղղընտա տէօնէն պիր գաշ բիշիլ իշտէն չըգարմը օլտաւը տըր: Հալպուքի էվլէթի թաթիլտէ թա. իաֆէնտէն գապուլ օլընան մու. գաթլէլէ իւզըն, տիրէթթօր՝ մէշ. իւրթ սէպէպի օլտաղսըղըն՝ իշճի. լէրտէն քիմէի գօլաճալաճազ լար:

Պու սէպէպտէն տիկէր եիւլլէր. ճէ ամէլէինն թաթիլ իթմէլէրի պիլիլ մաթի մէմուլէրիլէթիլիլիլ մուլիպ օլտուշ տըր: զիրա պու. նուլէն՝ հէք միլլէթտէն մախուլ օլտն Պուլկարիա էհալիլինն իշճի սընթիլ քէնտի մէնֆաթը հագի. գիսինի ֆարգ իթմէլէ պսլալըշ օլտըղը ըսպաթ օլընըյօր:

Էվլէթ, պիր գուրու էքմէք իշիւն պիւլիւն կիւն մաքիւնլար արասընտա թէհիլէլէ սուրէթտէ գան-թէր տէօքիւպտէ՝ սէրմալէ սահիպլէրինն, ֆապրիգաթօրլա. ընն գասալարըն ալթունլէ տօլ. տուրան իշճիլէր՝ եարըն աճ գալ. մամազ, հախտա պիր գազա վու. գուրիտէ սէֆալէթէ տիւլար օլտա. մազ իշիւն՝ պէյիլլէրինտէ իթթի. ֆազ հասըլ իտուպ, բէֆիլլէրի. նին հուգուգընը պու եօլտա մու. հաֆազա իթմէլի տիրլէր:

ՍԵՐՊԻԱ

Բէսմէն նէշր օլընան հալաթի. սաթա կէօրէ, Գուլմանօվա եազը. նընտա Սըրպլար վէ Արնափուտար պէյնիտէ գանլը պիր միւսատէմէ վուգու պուլուպ, իքի թարաֆտան մաթթուլ վէ մէճուհլար տիւլմիշ:

օլտըղընը, վէ քէզա պիր ասքէր վէ իքի սինօր մուհաֆըղը աղար սուրէթտէ հարէլէնմիշ պուլընտը. զընը Պէլկարատտան պա թէլէկրաֆ պիւտիլիլիշ տիր:

— Քէզա տիկէր պիր թէլէկրաֆ պիւնէն, Արնափուտար Գօրափիլ տաղը ճիվ սընտա սըրպ սինօրընը կէշմիշ էր իսէտէ, իւշ քիշի զուր. պան վերուպ, կէրի չէքիլմէլէ մէճ պուր օլտուշար:

ԻՆԿԻԼԹԷՐԱ

Միւլէպէֆա Մր. կլատըսթոնըն զիքրի իշիւն կլատըսթտա բէքս օլընան հէլլէլին բէսմի քիւշտը Հոկտեմբեր 11 տէ իճրա օլընտը: Վիւքէլատան Լօրտ Րօզպարի ի. րատը նուլթ իտէրէք կլատըսթո. նըն նատիտէ խաւալարընը թա. տատ էլլէտի:

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, 2 Հոկտեմբեր

ՋԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ	
Վալօն Լիպ. 57-58 հքթ. 8.40/ 9.-	
Արապա լիպ. 53-62 հքթ. 7.20/10.20	
ԱՐՔԱ,	
Վալօն 100 քիւ 8.90/ 9.05	
Արապա 45-50 լիպ. հքթ. 5.20/ 5.40	
ՋԱՎՏԱՐ	
Վալօն 53 54 լիպ. 6.80/ 6.90	
Արապա 6.90/ 7.-	
ՐԱԲԻՑԱ, 100 քիւ 19.20/ 19.30	
ՖԱՍՈՒԼԻՍ, 100 քիւ 14.- / 20.-	
ԵՈՒԼԱՅ	
Վալօն 100 քիւ 10.- / 10.10	
Արապա հէքթ. 5.40/ 5.00	
ՄԻՍԻՐ	
Արապա լիպ. 56-57 հքթ. 6.60/ 7.20	
ՏԱՐԷ լիպ. 57-58 հքթ. 6.40/ 7.-	
Կիւնտէ 500-600 արապա վէ 25-30	
Վալօն կէմէքտէ տիր:	
Վալօն մուսմէլէսի ալթուն ֆը. րանքլէ, արապա կիւմիլլէ: Նաբօ. լէօն 20.40 ֆրանք:	

ԲԱՍՈՒՔ

Վարնա մաղաղալարընտա իլիք սա. թըշար:	
Ինկիլիլ իլիլիլ Ն. 8-14 10.20	
» » Ն. 18-24 12.20	
Ելլէլ իլիլիլ Ն. 8-14 9.70	
Ալթըմըշ բամուք հօղա 1.80	
Բամպուկ ֆիյաթլարըն եիւքէլմէք. տէ տիր:	

ՊԱԳԱԼԻԹԷ

Վարնա բիւսաղաւթա պազալիլէ մալլէրին պու կիւնքի ֆիյաթը, ալ. թուն ֆրանք իլէ:	
ԳԱՀՎԷ 1.55/1.80	
Շէֆէր Նէմյէ - 54	
» (Բէսմէ) սանտը 29.50	
ԲԻՐԻՆՃ ճարն չուլալը 37.- / -.-	
» Ֆիլիպէ » 40.- / -.-	
» Ինկիլիլ » 25.50	
» Բիզօն » 52.-	
ԿԱԶ Սանտըղը 7.-	
Չէթիլն ԵԱՂԷ քիւ - .78/ - .90	
ԳՈՒՐՈՒ ԻԻԶԻԻՍ - .35	

ՍԱՐՐԱՅԻԹԷ

Նաբուլէն 20.40 ֆրանք	
Օսմ. լիւսալը 22.80 ալթուն ֆրանք	

Одговорникъ Н. Драгулевъ

Меч. на Хр. Н. Войниковъ—Варна